

Տ. ԹՈՐԴՈՄ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՅԻՇԱԿԻՆ

Մի նոր և անդարմանելի կորուստ, մի նոր և անողոք հարուստ Հայ Եկեղեցուն։ Մայր Աթոռն այրի և երուսաղէմի Պատրիարքութիւնը՝ որ կոչուած է օժանդակ լինել բոլոր այն դէպքում ուր կաշկանդուած Կաթողիկոսութիւնը չէ կարող լսելի անել իր ձայնը զրկուեց իր կոչման բարձրութեան վերայ կանգնած և հեղինակութեամբ այնքան զօրաւոր, այնքան ձեռնհաս զեկավորից։

Պէտք չէր երկորամեայ ժամոթութիւն և ոչ քննող աչքի զննութիւն։ Առաջին տեսութիւնն ենթ բաւ էր համոզուելու, որ հանգուցեալը սովորական Եկեղեցական չէր, մի ցայտուն դէմք էր, մարմացած պատկառանք հոգեսոր հօր բոլոր և անթերի բարեմասնութիւններով։ Եկեղեցականներ շատ ենք տեսել և ճանաչել մօտէն թէ հեռուէն, բայց լուսահոգի Պատրիարքի նման քչերին ենք հանդիպել։ Մի բացառիկ երեսոյթ էր, զսեմ պատկեր ճշմարիտ վեղարաւորի։ Գրաւիչ տեսքը, մեղմ բնաւորութիւնը, խօսելու և ճառիւլու ինքնայտուկ կերպը, շարժուածքն ու կեցուածքը չնշում էին անոռչութիւն և ջերմ վեհութիւն։

Կան հոգեսորականներ և սակաւ չեն, որոնց ինքնութեան գրեթէ միակ վկայականը սև զգեստն է։ այլապէս աշխարհիկ են հոգւով և մտքով, անգամ նիստ ու կացով։ Ո՞րքան հեռու էր այդպիսիներից ողբացեալը։ իսկական հոգեսոր տէր էր, գիտակից իր կոչման վահմութեան, գերազանցօրէն գիտակից։ Համոզմաւնքով էր հոգին սքեմը և սրբութեամբ ծառայեց նրան, ինտրած կոչումն իր զարդարանքն էր և ինքն եղաւ զարդարանք իր կոչման։

Զգայուն հոգին և նրբազգաց միտքը շատ օրօրուեցին վերջին ժամանակ սև սև յուղումներով։ Էջմիածնի տիուր կացութիւնը, Հայրապետի խորհրդաւոր անէացումը, Ամերիկայի խոռվութիւնները որ

դարձրին Եկեղեցին, խաղաղութեան և հաշտութեան այդ սրբազան տաճարը, բորբոքուած և անխոհնեմ կրքերի մրցարան, անտեսելով ալեսոր Եկեղեցու պատիւը, չիսայշելով տեսնել մթութիւններ Հայրապետական Նուիրակի, այդ լուսաւոր ջանի մէջ, խորապէս ցնցեցին հանգուցեալին և թերեւ անմասն չմնացին նրա աղէտառլի վախճանին։

Եի՞ւած Պատրիարքը գիտէր լինել բարեկամ, ջերմ և հաւատարիմ բարեկամ։ Շատերի թուրին, ինձ ևս պատուեց իր թանկագին զգացումներով։ Մշտական գրութեամբ տեղեակ կը պահէր իր ծրագիրներին, գրական թէ հասարակական Յուսունք որ իր յաջորդը կը շարունակէ անվրէպ ընթանալ նոյն չաւզով, ինչպէս հանգուցեալը հետեւց իր նախորդին, իր հոգեսոր ծնողին և կ'իրագործէ անկատար մնացած գործերը։ Դուրեան և Թորգոմ Պատրիարքները լուսատու ճրագնիր եղան հինաւուրց վանքի համար, պանծացուցին նրա անունը նոր և մեծ փայլով, հիացում և ակնածանք աղդելով ոչ միայն ազգային, այլև օտար և խիստ պահանջկոտ շրջաններում։ «Տեսայ հայոց վանքը, և Թորգոմ Պատրիարքն ինձ ընդունեց պարզ և մեծ արժանապատուութեամբ։ լուսագոյն տպաւորութիւններս յաջորդ ընթարելով հունապարհորդութեանս ընթացքին», ասաց ինձ անցեալ տարի Սիւրիայից դարձած մի օտար Եկեղեցական և մեծ գիտական։

Մաղթենք որ Երաւանապէմի Միարանութիւնը արժանաւոր յաջորդ ընթարելով կարենայ պահել իր անունը այն բարձրութեան վերայ, որին հասցըրին երջանկայիշատակ վերջին երկու Պատրիարքները։ Այս կը լինի լուսագոյն պատկը ողբացեալ Պատրիարքի թարմ շիրմին։

ՊՐՈՖ. Ն. ԱՐԱՆՑ